ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՇՀԱՊՁԲ 15/1-ՍՄԳՔ-16/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգի հայտերի գնահատման հանձնաժողովի նիստի

ք. Գորիս 3 մարտի, 2016թ.

ժամը 15:00

Մասնակցում էին հանձնաժողովի

Նախագահ՝ Գ. Բոլյանը

Անդամներ՝ Ա. Սարգսյանը , Մ. Հայրյանը

քարտուղար՝ Ա. Շալունցը

1. ՇՀԱՊՁԲ 15/1-ՍՄԳՔ-16/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով մրցույթի առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 23.02.2016թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի հրավերի տեքստերը միաժամանակ հրապարակվել է www.gnumner.am և www.armeps.am ինտերնետային կայքերում:

1.2 Գորիսի քաղաքապետարանի կարիքների վառելիքի ձեռքբերման 15/1 համար ՇՀԱՊՁԲ 15/1-ՍՄԳՔ-16/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրի համաձայն գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակցի անվանումը /անունը/	Հասցեն
1.	<<ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ	ք. Երևան, Պուշկինի 1
2.	<<<ենո և որդիներ>> ՍՊԸ	ք. Գորիս Արցախյան խճ. 4

1.3 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ – 0

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող փաստաթղթերը: Փաթեթում ներկայացված փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

1.6. Մասնակիցների առաջարկած գները

Ընդունել ի գիտություն, որ ներկայացված և բավարար գնահատված հայտերի գնային առաջարկներն ունեն հետևյալ տեսքը՝

h/h	Մասնակցի անվանումը /անունը/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/
1.	<<ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ	3 350 000
2.	<<<Հենո և որդիներ>> ՍՊԸ	3 504 000

2. Հիմք ընդունելով վերոգրյալը, ՇՀԱՊՁԲ 15/1-ՍՄԳՔ-16/1 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ -ին:
   Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0
3. Ծանուցել <<ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ -ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասին 4.3 կետի <<զ>> ենթակետով նախատեսված փաստաթղթերը:
   Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

4. ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N 105 –Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն 2015 թվականի մարտի 4-ին ՀՀ Ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած Մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցում:
   Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

5. Հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:
   Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի
նախագահ ---------- Գ. Բոլյան

Անդամներ ---------- Ա. Սարգսյան

---------- Մ. Հայրյան

Քարտուղար ---------- Ա. Շալունց